

ՃԱԳԱՐՆԵՐԸ ՎԱՆԴԱԿՆԵՐՈՒՄ

Ձեզ երևի հայտնի է այսպես կոչված Դիրիխլեի սկզբունքը, որը ձևակերպվում է հետևյալ կերպ.

Ենթադրենք, որ որոշ քանակությամբ ճագարների հավասարաչափ նստեցրել են վանդակների մեջ: Եթե ճագարների թիվն ավելի մեծ է քան վանդակներինը, ապա վանդակներից գոնե մեկում կլինի մեկից ավելի ճագար:

Քննարկենք այս դասական մաթեմատիկական փաստի ավելի ընդհանրացված դեպքը: Կա n վանդակ և m ճագար, որոնց նստեցրել են այդ վանդակներում: Պահանջվում է որոշել, թե ամենաշատը քանի՞ ճագար կարող է նստած լինել միևնույն վանդակում:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողում գրված է երկու բնական թիվ՝ n և m ($1 \leq n, m \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել խնդրի պատասխանը:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	2 3	2
2	17 1700	100